

Հայաստանի Ժողովրդավարության անհրաժեշտ է դիմացկուն պաշտպանություն

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Ժամանակն ու անելիքները

Երբ հարևան Ադրբեջանում իշխանությունը Ալիև հորից անցավ որդուն, Իլիամ Ալիևը հրապարակայնորեն խոսեց լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության մասին, ապա դադար վերցրեց Արցախյան հակամարտության շուրջ բանակցություններում: Ալիև որդուն ժամանակ էր անհրաժեշտ, իշխանությունը կոնսոլիդացնելու, բանակցությունների Էությունն ըմբռնելու, դրանք իմաստավորելու, իր դիրքերն ամրապնդելու համար: Ժամանակը ցույց տվեց, որ Ալիևն այդ ամենն օգտագործեց դիրքերը կոշտացնելու, զինվելու, պատերազմելու, քաղաքացիական հասարակությունն Ադրբեջանում հիմնահատակ խորտակելու և դիկտատուրա հաստատելու համար:

Ժամանակը կարևոր ռեսուրս է, այն կարելի է «արագացնել» կամ «դանդաղեցնել»: Հետհեղափոխական Հայաստանը նույնպես պետք է կարողանա ժամանակը ճիշտ կառավարել: Ցանկացած իշխանափոխությունից, առավել ևս հեղափոխությունից հետո, իշխանությունը կոնսոլիդացնելու համար ժամանակ է անհրաժեշտ: Եթե Իլիամ Ալիևն այդ ժամանակն օգտագործում էր դիկտատորական իշխանության կոնսոլիդացման նպատակով, ապա Հայաստանին ժամանակ է անհրաժեշտ ժողովրդավարական իշխանության կոնսոլիդացման համար: Ժողովրդավարական իշխանությունը առավել բարդ հակակշիռներով ու հյուսվածքներով ձևավորվող իշխանություն է: Նման համակարգը պետությանը ժամանակի ընթացքում տալիս է այնպիսի ճկունություն, որ, իշխանափոխությունից կամ արտաքին մարտահրավերներից անկախ, պետությունը մնում է կայուն և կանխատեսելի: Ահա նման Հայաստան կայացնելու հնարավորություն ունենք այսօր: Այս ճանապարհին ներքին ռեսուրսները՝ լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությունը, պաշտպաններն ու գործադիրը, կրթությունը, շուկան, բանակը, աստիճանաբար կոնսոլիդացվում են «գումարում-հանումներին» տարատեսակ համադրությունների կիրառմամբ: Սակայն, արտաքին աշխարհն ունի սեփական ժամացույցը և կարող է շտապեցնել, արագացնել, փորձել օգտվել իրավիճակից, ճնշել կամ աջակցել: Նման իրավիճակում Հայաստանի արտաքին քաղաքականության թիվ մեկ խնդիրն է՝ տնօրինել ժամանակն այնպես, որ երկրում հաստատվի արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ համադրելի ներքին հավասարակշռություն: Այս տեսանկյունից է անհրաժեշտ դիտարկել Արցախյան հակամարտության շուրջ բանակցությունները, ինչը մեր հիմնական արտաքին մարտահրավերն է: Հայաստանը պետք է բանակցային հերթական փուլ մտնի բացառապես ժողովրդավարական իշխանության կայացումից հետո: Շտապողականությունն այս հարցում վնասակար է՝ կարող է էլ ավելի սրել կոնֆլիկտը և անգամ հետադարձ հարված հասցնել ժողովրդավարության ուղով ընթացող Հայաստանին: Արտաքին քաղաքականության պատասխանատուներն այս ուղերձը հստակ պետք է հասցնեն ոչ միայն եռանախագահող պետություններին ու քաղաքակիրթ աշխարհին, այլև Ադրբեջանին. «Եթե Ադրբեջանը ցանկանում է խաղաղության շուրջ համաձայնության հասնել, ապա նման համաձայնությունը, Հայաստանի պարագայում, կենսունակ կլինի բացառապես ներքին կոնսենսուսի առկայության պայմաններում»:

Անվտանգությունը

Յուրաքանչյուր պետության համար առաջնայինը, թերևս, անվտանգությունն է: Հայաստանի անվտանգության առաջնային խնդիրը Արցախյան հակամարտությունն է: Ապրիլյան բառօրյան ապացուցեց, որ զինադադարի համաձայնագիրը և եռանախագահող պետությունների ջանքերը ռազմական գործողությունների վերսկսումը բացառելու լիարժեք երաշխիք չեն: Սա նշանակում է, որ պաշտպանության շարունակական ամրապնդումը հրատապ է: Ուստի անվտանգության ապահովման առումով մենք ոչ թե պետք է ժամանակ ձգենք, այլ պիտի ունեցած ժամանակն օգտագործենք հնարավորինս ինտենսիվ և արդյունավետ: Ապրիլյան պատերազմը ցուցադրեց, որ ռազմական ճանապարհով կոնֆլիկտը հանգուցալուծում չունի. ապրիլյան բառօրյայից հետո ռազմավարական զենքեր գնել են և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը: Ապրիլյան բառօրյայի ամենաարժեքավոր դասը հակամարտող կողմերի և աշխարհի համար քաղված է՝ ռազմական ուղին պատային է: Այսպիսով, Հայաստանն այլընտրանք չունի, քան զարգացնել ժողովրդավարության իր ուղին պաշտպանելու ունակ զինված ուժերն ու դրանց մարտունակությունը, ընդ որում, բացառապես քաղաքացիական վերահսկողության ներքո և արդի պահանջներին, մարտահրավերներին ու հնարավորություններին համահունչ: Իհարկե, անվտանգության ապահովումը հնարավոր չէ միայն



Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

զինված ուժերով: Նույնպիսի բարեփոխումներ են անհրաժեշտ անվտանգության մյուս բաղադրիչների պարագայում:

Տնտեսությունը

Ժողովրդավարական կառավարում ունեցող բազմաթիվ պետություններ ունեն անվտանգության բարձր մակարդակ, ժամանակակից ռազմական տեխնիկայով հագեցած հզոր զինված ուժեր: Միայն ԱՄՆ-ն իր ռազմական բյուջեով գերազանցում է ամենամեծ ռազմական բյուջե ունեցող հաջորդ յոթ պետությունների ծախսերը միասին վերցրած: Իրականության հրամայականը հստակ է. այո՛, արդի աշխարհում պետք է պաշտպանել ժողովրդավարությունն ու ժողովրդավարական ձեռքբերումները, ազատ շուկայական հարաբերությունները: Ընդ որում, անվտանգության կարիքները լավագույնս բավարարելու՝ զինված ուժերի զարգացման ու պահպանման խնդիրներին նշանակալի հանրային միջոցներ ուղղելու պարագայում անգամ, այդ միջոցների բեռը հնարավոր է թեթև կրել, եթե երկրի տնտեսությունը հզոր է: Արդի աշխարհում ժողովրդավարական կառավարումը սոցիալական զարգացման և հզոր տնտեսության լավագույն գրավականն է, իսկ անվտանգության ժամանակակից համակարգ ունենալու լավագույն գրավականը հզոր տնտեսությունն է: Անվտանգության ապահովման հրամայականն ակնհայտ է. տնտեսությունը պետք է ավելի առաջանցիկ տեմպով աճի, քան անվտանգության ապահովմանն ուղղված ռազմական կարիքները: Ընդ որում, եթե անվտանգության կարիքների ապահովմանն ուղղված միջոցները մեծապես կախված են արտաքին գործոններից, ապա տնտեսական աճի ապահովման բանային գերազանցապես սեփական գրպանում է: Վերջին տասնամյակի ընթացքում երկու ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամերն ու դրանց բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, ապրիլյան պատերազմով պայմանավորված ռազմական կարիքների աճը հանգեցրեցին բացասական դինամիկայի: Այս դրությունը օր առաջ անհրաժեշտ է փոխել: Տնտեսության զարգացումը կենսական նշանակություն է ստացել. տնտեսական բարեփոխումներն ու լուրջ ձեռքբերումները ոչ թե պարզապես անհրաժեշտ են, այլ անհետաձգելի են: Որքան էլ տարօրինակ հնչի, հենց այստեղ է, որ ժողովրդավարությունը կարող է հակասության մեջ մտնել տնտեսական զարգացման ու անհրաժեշտ բարեփոխումների գերակայության ու հրատապության հետ: Եթե անվտանգության ու արտաքին քաղաքականության, այդ թվում բանակցությունների հարցում հանրային կոնսենսուս ապահովելն անհրաժեշտ է ճկունություն ու դիմադրողականություն ձևավորելու համար, ապա նման կոնսենսուսային մեթոդներով տնտեսական փոփոխությունները կարող են հանգեցնել ժամանակի ճակատագրական կորստի: Եզրակացությունը հետևյալն է. տնտեսական փոփոխությունները կարող են ավելի ցավոտ լինել և կարող են հակասության մեջ մտնել քաղաքական շահի, քաղաքական պոպուլյզմի և բնակչության անիրատեսական սպասումների հետ:

Բանակցային փակուղուց դուրս գալու գրավականը

Չի կարելի հապաղել տնտեսության զարգացման հարցում, ինչպես անթույլատրելի է հապաղել անվտանգության կուռ համակարգ ձևավորելու հարցում: Պատերազմի վտանգը չի վերացել, ինչը սակայն չի նշանակում, թե ազգի միահամուռ արձագանքը, հանրային ինքնապաշտպանական միասնականության գիտակցումը անհրաժեշտ է բացառապես որպես պատերազմի արհավիրքներին ու մարտահրավերներին դիմագրավելու ռեսուրս: Երկրի հակառակը, մենք պիտի օգտագործենք մեզ ընձեռված, մեր ձեռք բերած ժամանակը նման պաշարը մեծացնելու համար: Ավելի՛ն, միայն անվտանգության հզոր համակարգի կառուցումը կարող է հնարավոր դարձնել բանակցությունների պատային վիճակի հաղթահարումը: **Արդյունավետ բանակցությունների գրավականը ռազմական ուղով կոնֆլիկտը լուծելու ցանկությունները զսպելն է**, իսկ վերջինս էլ պայմանավորված է անվտանգության ապահովման հզոր համակարգի և զինված ուժերի առկայությամբ:

Համառոտագիրը մշակվել է 2019թ. փետրվարի 2-ին կայացած՝ «Հայաստանի Հանրապետության պատրաստվածության աստիճանն ու դիմակայելու կարողությունը. Ադրբեյջանում ստեղծված ներքին իրավիճակը և անվտանգության շուրջ մտահոգությունները» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

